

Է.00.01 – ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի աշխարհագրական դիրքը, տարածքը, պատմական հարևանները: Հայրենիքի գաղափարը, բովանդակությունը, ծագումը: Հայ ժողովրդի պատմության պարբերացման պրոբլեմը: Հայկական լեռնաշխարհն իբրև մարդկային հասարակության հնագույն բնօրրաններից մեկը: Համահայկական հասարակությունը Հայկական լեռնաշխարհում: Հայ ժողովրդի կազմավորման ընթացքը: Յեղային ու պետական միավորումները: Հայ ժողովրդի կազմավորման շուրջ գոյություն ունեցող տեսակետները:

Պետականության ծագումը Հայկական լեռնաշխարհում: Արարատյան (Ուրարտու) թագավորության հիմնահարցերը: Համահայկական միասնական պետության կազմավորումը: Երվանդունիների թագավորությունը մ.թ.ա. 6-3-րդ դարերում: Հայկական վաղնջական մշակույթը (հնագույն ժամանակներից մինչև մ.թ.ա. 3-րդ դար):

Հայկական միասնական կենտրոնացված պետության առաջացումը: Հայաստանի էթնոքաղաքական և տնտեսական վերելքը առաջին Արտաշեսյանների օրոք: Հայկական աշխարհակալ պետությունը: Տիգրան Մեծի պետության տեղն ու դերը Մերձավոր Արևելքի ռազմա-քաղաքական համակարգում: Հայաստանի պայքարը Հռոմի ծավալապաշտական քաղաքականության դեմ: Մ.թ.ա. 66թ. Արտաշատի պայմանագրի նշանակությունը: Հայաստանն Արևմուտք-Արևելք հակամարտության կիզակետում: Արտավազդ 2-րդի քաղաքականությունը: Հայաստանը վերջին Արտաշեսյանների օրոք: Արտաշեսյան թագավորության անկումը: Արտաշեսյանների թագավորության տեղը Հայոց պատմության մեջ: Հռոմեապարթևական հակամարտությունները մ.թ. 1-ին դարի կեսերին և Հայաստանը: Արշակունիների թագավորության հաստատումը Հայաստանում. պատճառները:

Արշակունիների ջանքերը Հայաստանում ժառանգական իշխանություն հաստատելու ուղղությամբ (2-3-րդ դարեր): Սասանյան հեղաշրջումը Պարսկաստանում և Հայաստանը: Ստրկատիրության պրոբլեմը: Հայաստանի հասարակական-տնտեսական զարգացման առանձնահատկությունները հելլենիզմի ժամանակաշրջանում: Հայկական մշակույթը հելլենիստական դարաշրջանում: Ֆեոդալիզմի գենեզիսը Հայաստանում: Քրիստոնեության հռչակումը պետական կրոն: Նրա տեղն ու դերը Հայոց պատմության մեջ: Տրդատ 3-րդ Մեծի ներքին և արտաքին քաղաքականությունը: Քրիստոնեության ամրապնդումը Հայաստանում: Հայաստանը Խոսրով 3-րդ Կոտակի և Տիրան Արշակունու օրոք: Պայքար թագավորական իշխանության ամրապնդման համար: Արշակ 2-րդի պայքարը կենտրոնացված ուժեղ պետության հաստատման և Հայաստանի քաղաքական անկախության պահպանման համար: Նրա քաղաքականության ձախողման պատճառները: Պապ Արշակունու գործունեության բնութագիրը: Նրա փորձը քրիստոնեական եկեղեցին ազգայնացնելու ուղղությամբ: Արշակունիների թագավորության անկումը. Պատճառներն ու դասերը: Արշակունյաց Հայաստանի կառուցվածքը:

Հայաստանի կացությունը 5-րդ դարի սկզբներին: Հայկական մարզպանությունը: Արևմտյան Հայաստանի վարչական բաժանումները: Վարդանանց պատերազմը. պատմական նշանակությունը: Վահանանց պատերազմը: Ազատագրական պայքարի ընթացքը: Նվարսակի հաշտության պայմանագրի նշանակությունը: Ազատագրական գաղափարախոսության ձևավորումը Հայաստանում 5-րդ դարում: Ազատագրական լեգենդը: Հայ ժողովրդի պայքարը ներքին ինքնուրույնության համար 6-րդ դարում: Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում: Քրիստոնեական եկեղեցու ազգայնացումը Հայաստանում: Հայ ժողովրդի պայքարը հոգևոր, էթնոմշակութային անկախության համար: Մեսրոպ Մաշտոցը և հայոց գրերի ստեղծումը: Գրերի ստեղծման պատմական նշանակությունը: Վաղ միջ-

նադարյան մշակույթը Հայաստանում, նրա դերը հայ ժողովրդի գոյապայքարում:

Արաբական արշավանքները Հայաստան: Քաղաքական նոր դիրքորոշումը և 652թ. հայ-արաբական պայմանագիրը: Հայ ժողովրդի ազատագրական պայքարը արաբական տիրապետության դեմ 8-րդ դարում: 850-855թթ. հակաարաբական ապստամբությունը Հայաստանում: Ապստամբության պատմական նշանակությունը: Աղանդավորական շարժումները Հայաստանում 5-9-րդ դարերում:

Հայկական պետականության վերականգնումը 9-րդ դարի վերջերին: Աշոտ 1-ինի և Սմբատ 1-ինի դերը: Աշոտ 2-րդ Երկաթի պայքարը պետության ամրապնդման ուղղությամբ: Արաբների վերջնական վտարումը Հայաստանից: Հայոց պետականությունը 10-րդ դարի երկրորդ կեսին և 11-րդ դարի սկզբներին: Երկրի միավորման փորձերը և դրա ձախողման պատճառները: Բագրատունյաց թագավորության անկումը: Պատճառները: Քաղաքական մասնատվածությունը Հայաստանում 10-11-րդ դարերում: Գավառական անջատողականության միտումները: Աղանդավորական և գյուղացիական շարժումները Հայաստանում 9-11-րդ դարերում: Բագրատունյաց Հայաստանի հասարակական-տնտեսական կյանքը: Բագրատունյաց Հայաստանի պետական կառուցվածքը:

Սելջուկ-թուրքերի արշավանքները և նրանց հաստատվելը Հայաստանում և Բյուզանդիայում: Հայաստան-Վրաստան փոխհարաբերությունները 12-13-րդ դարերում: Հյուսիս-արևելյան Հայաստանի ազատագրումը: Զաքարյանների իշխանության տեղը Վրացական թագավորության համակարգում: Հայ գաղթականության առաջացման պատճառները, գաղթականության ուղիներն ու հանգրվանները:

Հայերի հաստատվելը Կիլիկիայում. հայկական իշխանության ձևավորումը: Հայ-խաչակրաց հարաբերությունները: Թագավորության հռչակումը Կիլիկիայում: Լևոն 2-րդ: Կիլիկյան Հայաստանը հայոց պատմական

ճակատագրում: Կիլիկիայի հայկական թագավորությունը Հեթումյանների օրոք: Կիլիկիայի հայկական թագավորության անկումը և դրա պատճառները: Կիլիկիայի հայկական թագավորության պետական կառուցվածքը: Հասարակական-տնտեսական կյանքը Կիլիկյան Հայաստանում: Հայկական մշակույթը 9-14-րդ դարերում. Վերածնության տարրերը հայկական մշակույթի մեջ:

Մոնղոլ-թաթարների քաղաքական գերիշխանության հաստատումը Հայաստանում: Երկրի հետագա անկումը: Հայաստանը Սեֆևյան Պարսկաստանի և Օսմանյան Թուրքիայի հակամարտությունների ոլորտում: Վաճառականության դերը 16-18-րդ դարերում: Հայոց հասարակական-քաղաքական կյանքը: Հայոց եկեղեցու գործունեությունը և տեղը ազգային կյանքում 15-16-րդ դարերում: Հայոց եկեղեցու նվիրապետական աթոռները:

Հայ ազատագրական լեգենդը և հայերի ազատագրական շարժման նախափորձերը 15-16-րդ դարերում: Հայկական մշակույթը 15-17-րդ դարերում: Հայկական հարցը. բովանդակությունը, ծագումը: Հայ ժողովրդի քաղաքական կողմնորոշման հիմնահարցը (16-18-րդ դարեր): Հայ ազատագրական շարժումները 17-րդ դարի երկրորդ կեսին և 18-րդ դարի սկզբներին: Իսրայել Օրի: Հայ ազատագրական պայքարը Արցախում և Սյունիքում 18-րդ դարի 20-ական թվականներին: Դասերը և պատմական նշանակությունը: Հովսեփ Էմինը և հայ ազատագրական շարժումը: Հայաստանի ազատագրության Մադրասի խմբակի ծրագիրը: Հայաստանի ազատագրության ծրագրերը 18-րդ դարի վերջերին: Ռուսաստանը և հայ ազատագրական շարժումը: Տարբեր ուղղություններ հայ ազատագրական շարժման մեջ:

Հայկական գաղթավայրերի դերը հայկական մշակույթի զարգացման և հայ ազատագրական շարժման գաղափարախոսության մշակման գործում: Գաղթականության հիմնական կենտրոնները: Հայաստանի կացու-

թյունը 19-րդ դարի սկզբներին: Տերությունների պայքարը Անդրկովկասի համար: Արևելյան Հայաստանի նվաճումը Ռուսաստանի կողմից: Ռուսաստանը հայ ժողովրդի պատմական ճակատագրում: 1828-1829թթ ռուս-թուրքական պատերազմը և հայերը: Ցարիզմի գաղութային քաղաքականությունը Արևելյան Հայաստանում 1830-1860-ական թվականներին:

Արևմտյան Հայաստանը 19-րդ դարի 30-60-ական թթ.-ին: Սահմանադրական շարժումը, արդյունքներն ու նշանակությունը: Հայ հասարակական-քաղաքական միտքը 19-րդ դարի 50-60-ականներին: Չեյթունի 1862թ. ապստամբությունը, նշանակությունը: Հայկական մշակույթը 18-րդ դարում և 19-րդ դարի առաջին կեսին:

1861թ. գյուղացիական ռեֆորմը Ռուսաստանում և նրա կիրառման առանձնահատկությունները Հայաստանում: Հայկական առևտրա-արդյունաբերական կապիտալի զարգացումն ու կենտրոնացումը Անդրկովկասի կենտրոններում: 1877-1878թթ. ռուս-թուրքական պատերազմը. հայկական հարցի միջազգայնացումը: Սան-Ստեֆանոյի և Բեռլինի պայմանագրերը: Հայ ազգային-ազատագրական շարժումները 19-րդ դարի 70-80-ական թվականներին: Ազատագրական խմբակները: Հայոց ազգային գաղափարախոսությունը. բովանդակությունը, ծագումը: Հայ քաղաքական կուսակցությունների ձևավորումը: 19-րդ դարի վերջի և 20-րդ դարի սկզբի ազգային-ազատագրական պայքարը. պայքարի ձևերը: Ազատագրական պայքարի զինված փուլի սկզբնավորումը:

Պանթուրքիզմի գաղափարախոսությունը և Հայաստանը: Պանօսմանիզմի և պանիսլամիզմի գաղափարախոսությունները: Արևմտահայերի ցեղասպանության թուրքական ծրագրի կենսագործման սկիզբը: Հայկական կոտորածները 1894-1896 թվականներին: Տերությունները և Հայկական հարցը 19-րդ դարի 90-ական թվականներին:

Մարքսիզմի տարածումը հայ իրականության մեջ: Հայաստանը 20-րդ դարի սկզբներին: 1903թ. հունիսի 12-ի օրենքը: Ազգային-ազատագրա-

կան շարժումները Արևմտյան Հայաստանում: 1904թ. Սասունի ապստամբությունը: Հայաստանը 1905-1907թթ. ռուսական առաջին հեղափոխության ժամանակաշրջանում: Հայ-թաթարական ընդհարումները:

Արևմտյան Հայաստանը 1905-1914 թվականներին: Հայկական հարցը Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին: Հայաստանը Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին: Պատերազմի կովկասյան ճակատը: Հայերը և պատերազմը: Կամավորական շարժումը. դերն ու նշանակությունը: Արևմտահայության Մեծ Եղեռնը: Հայոց ցեղասպանության պատճառները և դասերը: Ինքնապաշտպանական մարտերը 1915 թվականին: Պարտության պատճառները:

Հայաստանը փետրվարյան հեղափոխությունից հետո: Ժամանակավոր կառավարությունը և Հայկական հարցը: Հայոց Ազգային խորհուրդների ձևավորումը: Հայկական մշակույթը 19-րդ դարի երկրորդ կեսին և 20-րդ դարի սկզբին: Հայկական գաղթավայրերը 19-րդ դարում և 20-րդ դարի սկզբին: Հայկական սփյուռքի առաջացումը: 1917թ. հոկտեմբերյան բուլժևիկյան հեղաշրջումը. այդ հեղաշրջման դերը հայ ժողովրդի պատմական ճակատագրում: Թուրքական ներխուժումը Անդրկովկաս 1918 թվականին: Տրապիզոնի բանակցությունները: Բաթումի պայմանագիրը:

1918թ. մայիսյան հերոսամարտերը: Հայաստանի Հանրապետության հռչակումը: Հայաստանի Հանրապետության (1918-1920թթ.) կազմավորումը: Պետական կառուցվածքը: Հայաստանի Հանրապետության ներքին քաղաքականությունը (1918-1920թթ.): Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականությունը (1918-1920թթ.): Հայկական հարցը Փարիզի կոնֆերանսում: Սևրի պայմանագիրը: Իրադարձությունները Կիլիկիայում 1920-1921 թվականներին: 1920թ. թուրք-հայկական պատերազմը: Հայաստանի Հանրապետության կործանման պատճառները:

Հայաստանի խորհրդայնացումը: Դեկտեմբերի 2-ի Երևանյան համաձայնագիրը: Հայկական հարցը 1921 թվականի Մոսկվայի և Կարսի պայմա-

նագրերում: 1921թ. փետրվարյան ապստամբությունը. պատճառները: Արցախի հիմնահարցը 1918-1921 թվականներին: Արցախի բռնակցումը Ադրբեջանին: Զանգեզուրի գոյամարտը 1918-1921 թվականներին: Գարեգին Նժդեհ: Նախիջևանի, Լոռու և Զավախքի հարցերը 1918-1921 թվականներին: Հայաստանի տարածքային կորուստները:

Ռազմական կոմունիզմի և ՆԷՊ-ի քաղաքականությունը Հայաստանում: Առանձնահատկությունները: Անդրֆեդերացիայի և ԽՍՀՄ կազմավորումը: Հայաստանը ԽՍՀՄ համակարգում: Ինդուստրացման քաղաքականության իրականացումը Հայաստանում. արդյունքները. թույլ տրված սխալները: Գյուղատնտեսության կոլեկտիվացման քաղաքականությունը Հայաստանում և դրա ծանր հետևանքները: Խորհրդային Հայաստանի հասարակական-քաղաքական կյանքը 1920-1930-ական թվականներին. Անհատի պաշտամունքի ծանր հետևանքները: Խորհրդային Հայաստանի մշակութային կյանքը 1920-1930-ական թվականներին: Հայկական սփյուռքը 1920-1940 թվականներին: Հայկական հարցը. Լոզանի կոնֆերանսը: Հայրենադարձությունը:

Հայ ժողովրդի մասնակցությունը Երկրորդ համաշխարհային պատերազմին: Խորհրդային Հայաստանի տնտեսությունը 1945-1980-ական թվականներին: Խորհրդային Հայաստանի հասարակական-քաղաքական կյանքը 1946-1980-ական թվականներին: Խորհրդային Հայաստանի պատմության գնահատության հիմնահարցը:

Արցախյան շարժման նոր փուլը (1988-1990-ական թվականներ): ԼՂՀ-ի հռչակումը: Հայաստանի անկախության հռչակումը (1991թ.): Պետական կառուցվածքը Հայաստանի Հանրապետության ներքին քաղաքականությունը (1991-2003թթ.): Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականությունը (1991-2003թթ.): Հայկական սփյուռքը (1945-1980-ական թվականներին): Հայրենիք-սփյուռք հարաբերությունները արդի փուլում (1990-2000-ական թվականներ): Հայկական հարցը արդի փուլում

(1970-2000-ական թվականներ): Հայկական մշակույթը (1945-2000-ական թվականներ):

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ադոնց Ն.Գ., Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում. Քաղաքական կացությունը ըստ նախարարական կարգերի, Երևան, 1987:
2. Ադոնց Ն.Գ., Հայկական հարց, Երևան, 1996:
3. Անանյան Ա.Լ., Հայոց ցեղասպանության հիմնախնդիրը հայթորքական հարաբերություններում (1991-2004 թթ.), Երևան, 2006:
4. Անասյան Հ.Ա., XVII դարի ազատագրական շարժումներն Արևմտյան Հայաստանում, Երևան, 1961:
5. Ավետիսյան Հ.Ա., Հայկական հարցը 1918 թվականին, Երևան, 1997:
6. Բաբայան Լ.Հ., Հայաստանի սոցիալ-տնտեսական և քաղաքական պատմությունը 13-14-րդ դդ., Եր., 1964, 602 էջ:
7. Բաբայան Լ.Հ., Դրվագներ Հայաստանի վաղ ֆեոդալիզմի դարաշրջանի պատմագրության (V-VIII դդ.), Եր., 1977, 409 էջ:
8. Բաբայան Լ. Հ., Դրվագներ Հայաստանի զարգացած ֆեոդալիզմի դարաշրջանի պատմագրության (IX-XIII դարեր), Եր., 1981, 391 էջ:
9. Բաբայան Լ.Հ., Դրվագներ Հայաստանի XIV-XVIII դարերի պատմագրության, Եր., 1984, 294 էջ:
10. Գալոյան Գ.Ա., Հայաստանը և մեծ տերությունները 1917-1923 թթ., Երևան, 1999:
11. Գալոյան Գ.Ա., Հայաստանը մեծ տերությունների աշխարհակալական առճակատումներում (XVI դարից 1917 թ.) Երևան, 2004:.
12. Գասպարյան Ռ.Հ., Հայկական կոտորածները Կիլիկիայում (19-րդ դարի 90-ական թթ. – 1921թ.), Երևան, 2006:
13. Դալլաքյան Կ.Լ., Հայ սփյուռքի պատմություն, Երևան, 1998:
14. Դիլոյան Վ.Ա., Արևելյան Հայաստանը XIX դարի առաջին երեսնամյակին և հայ ռուսական հարաբերությունները, Երևան, 1989:
15. Երեմյան Ա.Տ., Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, Երևան, 1963:
16. Զուլալյան Մ., Արևմտյան Հայաստանը XVI-XVIII դդ., Երևան, 1980:
17. Թորոսյան Շ.Թ., Կիլիկիայի հայերի ազգային-ազատագրական շարժումները, 1919-1920 թթ., Երևան, 1987:
18. Լեո, Երկերի ժողովածու, հտ. 1-4, Երևան, 1966-84:

19. Խաչատրյան Կ.Հ., Հայ-ռուսական հարաբերությունները 1920-1922 թթ., Երևան, 2007:
20. Խուրշուդյան Լ.Ա., Հայկական հարցը, Եր., 1995:
21. Կարապետյան Մ.Ս., Հայոց մեծ եղեռնը պատմագրության մեջ, Եր., 1993:
22. Կիրակոսյան Զ.Ս., Առաջին համաշխարհային պատերազմը և արևմտահայությունը, Երևան, 1967:
23. Կիրակոսյան Զ.Ս., Բուրժուական դիվանագիտությունը և Հայաստանը, Գիրք I (XIX դարի 70-ական թվականներ), Երևան, 1973: Գիրք II (XIX դարի 80-ական թվականներ), Երևան, 1980:
24. Հակոբյան Ա.Մ., Հայաստանի խորհրդարանը և քաղաքական կուսակցությունները. 1918-1920 թթ., Երևան, 2005:
25. Հակոբյան Թ.Խ., Հայաստանի պատմական աշխարհագրություն, Երևան, 1984:
26. Համբարյան Ա.Ա., Ազատագրական շարժումները Արևմտյան Հայաստանում (1898-1908 թթ.), Երևան, 1999:
27. Հայ գաղթաշխարհի պատմություն (Միջնադարից մինչև 1920 թ.), հտ. I, Սլավոնական աշխարհի և հյուսիսային Կովկասի հայկական գաղութները (խմբ. Վ. Միքայելյան), Եր., 2003, հտ II.: Ասիայի և Աֆրիկայի հայկական գաղութները, (խմբ. Վ. Միքայելյան), Եր., 2003, հ. III, խմբագիրներ՝ Վ. Բարխուդարյան, Բ. Ավագյան, Է. Թաջիրյան), Եր., 2013:
28. Հայ ժողովրդի պատմություն, հատ. I-VIII, ՀԽՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1967, 1970, 1971, 1972, 1976, 1974, 1981, 1984:
29. Հայ պարբերական մամուլի պատմություն (18-19-րդ դարեր), (խմբ. Ա.Խառատյան, Մ.Մխիթարյան, Լ.Գևորգյան), Հ. 1, Գահիրէ, 2006, Հ. 2 (1900-1922), (խմբ. Ա.Խառատյան, Լ.Գևորգյան), Եր., 2017:
30. Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923), Երևան, 1972:
31. Հայոց պատմություն, հ. 2, գիրք II: Միջին դարեր (IX դարի կես-XVII դարի առաջին կես), Եր, 2014, հ. III, գիրք առաջին, Նոր ժամանակաշրջան (XVII դարի երկրորդ կես-XIX դարի վերջ), հ. III, գիրք II, Նոր ժամանակաշրջան (1901-1918 թթ.), Եր., 2015, հ. IV, գիրք առաջին, Նորագույն ժամանակաշրջան (1918-1945 թթ.), Եր., 2010, հ. IV, գիրք երկրորդ, Նորագույն ժամանակաշրջան (1946-1991 թթ.), Եր., 2016:

32. Հարությունյան Կ.Ա., Հայ ժողովրդի մասնակցությունը երկրորդ համաշխարհային պատերազմին (1939-1945), Երևան, 2001:
33. Հարությունյան Կ.Ա., Հայկական ազգային զորամիավորումները 1918-1945 թթ., Երևան, 2002:
34. Հարությունյան Հ.Մ., Լեռնային Ղարաբաղը 1917-1921 թթ., Ե., 1996:
35. Հովհաննիսյան Ա.Գ., Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, Գիրք 1, Երևան, 1957, գիրք 2, Երևան, 1959:
36. Հովհաննիսյան Ա.Գ., Նալբանդյանը և նրա ժամանակը, հտ. 1,2, Երևան, 1955, 1956:
37. Հովհաննիսյան Ռ.Գ., Հայաստանի Հանրապետություն: Հատոր I. Առաջին տարին, 1918-1919, Եր., 2005, հատոր II: Վերսալից-Լոնդոն, 1919-1920, Եր., 2014, հատոր III: Լոնդոնից-Սևր, փետրվար-օգոստոս, 1920, Եր., 2015, հատոր IV: Սալի և մանգաղի միջև. Մասնատում և խորհրդայնացում, Եր., 2016:
38. Ղազախեցյան Վ.Ն., Հայաստանը 1920-1940 թթ., Երևան, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ:
39. Ղազարյան Հ.Մ., Արևմտահայերի սոցիալ-տնտեսական և քաղաքական դրությունը 1800-1870 թթ., Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1967, 668 էջ:
40. Մանասերյան Ռ.Լ., Հայաստանը Արտավազդից մինչև Տրդատ Մեծ, Երևան, 1997:
41. Մելիք-Բախշյան Ստ.Տ., Հայոց պատմության աղբյուրագիտություն. Հնագույն ժամանակներից մինչև 18-րդ դարի վերջը, Ե., 1996, 336 էջ:
42. Մելիքսեթյան Հ.Ու., Հայրենիք-սփյուռք առնչությունները և հայրենադարձությունը (1920-1980թթ.), Երևան, 1958:
43. Մելքոնյան Ա.Ա., Ջավախքը 19-րդ դարում և 20-րդ դարի առաջին քառորդին, Եր., 2003:
44. Մելքոնյան Ա.Ա., Հայաստանի պատմության և ժողովրդագրության հիմնահարցեր, Եր., 2011:
45. Նաթալի Շ., Թուրքերը և մենք, Երևան, 1992:
46. Ներսիսյան Մ.Գ., Հայ ժողովրդի ազատագրական պայքարը թուրքական բռնապետության դեմ, Երևան, 2002:
47. Ուլուբաբյան Բ.Ա., Արցախի պատմությունը (սկզբից մինչև մեր օրերը), Երևան 1995:
48. Սահակյան Ռ.Օ., Արևմտահայության ցեղասպանությունը և ինքնապաշտպանական կոիվները 1915 թվականին, Երևան, 2006:

49. Սահակյան Ռ.Օ, Արևմտյան Հայաստանի ռազմաքաղաքական և վարչատնտեսական իրավիճակը (1914 թ. հուլիս – 1917 թ. փետրվար), Եր., Պատմ. ինստ., 2015, 428 էջ:
50. Սահակյան Ռ.Գ., Թուրք-ֆրանսիական հարաբերությունները և Կիլիկիան 1919-1921 թթ., Երևան, 1970:
51. Սարուխանյան Ն.Բ., Հայկական հարցը մինչխորհրդային հայ հասարակական-քաղաքական մտքի և պատմագրության մեջ Ե., 1997:
52. Սարուխանյան Ն.Բ., Հայ պատմագիտությունը XIX դարում և XX դարակզբին, «Գիտություն» հրատ., Եր., 2013, 544 էջ
53. Սարուխանյան Ն.Բ., Խորհրդահայ պատմագիտությունը 1920-1930-ական թվականներին, Եր., «Գիտություն» հրատ., 2016, 232 էջ:
54. Սիմոնյան Հր.Ռ., Անդրանիկի ժամանակը, գիրք 1-2, Երևան, 1996:
55. Սիմոնյան Հր.Ռ., Թուրք-հայկական հարաբերությունների պատմությունից, Երևան, 1991:
56. Սվազյան Հ.Ս., Աղվանից աշխարհի պատմություն (Հնագույն շրջանից – 8-րդ դարը ներառյալ), Երևան, 2006:
57. Վիրաբյան Ա.Ս., Հայաստանը Ստալինից մինչև Խրուշչով. Հասարակական-քաղաքական կյանքը 1945-1957 թթ., Երևան, 2001:
58. Ութուջյան Ա.Ա., Հայ պատմագիտական միտքը XIV-XVII դարերում, Եր., Պատմ. ինստ., 2016, 115 էջ:
59. Гамквелидзе Т.В., Иванов Вч. Вс., Индо-европейский язык и индоевропейцы, т. 1-2, Тбилиси, 1984.
60. Кеворкян Р., Геноцид армян. Полная история, М., 2015.
61. Микаелян Г.Г., История Киликийского армянского государства, Ереван, 1952.
62. Тер-Гевондян А.Н., Армения и Арабский халифат, Ереван, 1977.

**Է.00.02 – ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ, ՄԻՋԱԶԳԱՅԻՆ
ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

Հին աշխարհի պատմություն

Շումերական քաղաք-պետությունների առաջացումը և զարգացումը: Ասորեստանյան Նոր տերությունը մ.թ.ա. VIII-VII դդ.: Նոր բաբելոնյան տերությունը: Եգիպտական Նոր թագավորությունը: Ռամզես II: Խեթական տերությունը մ.թ.ա. XIV-XIII դդ.: Աքեմենյան տերությունը: Հույն-պարսկական պատերազմները: Ալեքսանդր Մակեդոնացու արշավանքները և «համաշխարհային» տերության ստեղծումը: Սելևկյան տերությունը: Հնդկաստանը Մաուրյան հարստության շրջանում (մ.թ.ա. IV-II դդ.): Աշոկա տիրակալ: Չինաստանը մ.թ.ա. IV - III դդ.: Ցին Շի Հուանդի: Պարթևական պետությունը: Հռոմեական կայսրությունը I - II դդ.: Քրիստոնեական կրոնի առաջացումը և տարածումը: Հռոմեական կայսրության մասնատումն ու անկումը:

Միջին դարերի պատմություն

Սասանյան տերությունը: Բյուզանդական կայսրությունը Հուստինիանոս I-ի օրոք: Իսլամի առաջացումը: Արաբական խալիֆայությունը VII-XIII դդ.: Կարլոս Մեծի կայսրությունը: Բյուզանդիան Հայկական (Մակեդոնական) հարստության օրոք: Սելջուկ-թյուրքերի արշավանքները: Իկոնիայի (Ռումի) սուլթանությունը: Վրաց թագավորությունը XI-XIII դարերում և հայ-վրացական փոխհարաբերությունները: Խաչակրաց արշավանքները. նրանց նպատակներն ու հետևանքները: Մոնղոլ-թաթարական արշավանքները և մոնղոլական տերության ստեղծումը: Հարյուրամյա պատերազմը: Օսմանյան պետության առաջացումը և նվաճողական քաղաքականությունը XIV - XV դդ.: Ռեֆորմացիան: Մարտին Լյութեր: Սեֆյան տերությունը: Շահ Աբբաս I: XVII դարի անգլիական հեղափոխությունը:

Օլիվեր Կրոմվել: Պետրոս I-ի բարենորոգումները: Ռուսաստանյան կայսրության ստեղծումը:

Նոր շրջանի պատմություն

ԱՄՆ պետության առաջացումը: Ջորջ Վաշինգտոն: 1789 թ. Ֆրանսիական մեծ հեղափոխությունը: Մաքսիմիլիան Ռոբեսպիեռ: Նապոլեոն Բոնապարտ: Ֆրանսիական կայսրությունը 1804-1815 թթ.: Ռուս-պարսկական պատերազմները (1804-1813 թթ., 1826-1828 թթ.): Գյուլիստանի և Թուրքմենչայի պայմանագրերը: Քաղաքացիական պատերազմը ԱՄՆ-ում (1861-1865 թթ.): Աբրահամ Լինքոլն: Իտալիայի միավորումը (1859 - 1871 թթ.): Ջուզեպպե Գարիբալդի: Ֆրանս-պրուսական պատերազմը (1870 - 1871 թթ.): Գերմանական կայսրության ստեղծումը: Օտտո ֆոն Բիսմարկ: Ռուս-թուրքական 1877-1878 թթ. պատերազմը: Սան-Ստեֆանոյի պայմանագիրը: Բեռլինի վեհաժողովը: Արաբական երկրների ազգային-մշակութային զարթոնքը՝ Նահդա: 1905-1911 թթ. սահմանադրական շարժումն Իրանում: 1908 թ. երիտթուրքական հեղաշրջումը: Օսմանյան հպատակ ժողովուրդների դիրքորոշումը: Առաջին համաշխարհային պատերազմի պատճառները և սկիզբը: Օսմանյան կայսրությունը առաջին համաշխարհային պատերազմի տարիներին: Հայոց ցեղասպանությունը: 1917 թ. Փետրվարյան և Հոկտեմբերյան հեղափոխությունները Ռուսաստանում: Առաջին համաշխարհային պատերազմի ավարտը և հետևանքները:

Նորագույն պատմություն

Քաղաքացիական պատերազմը Ռուսաստանում (1918 - 1922 թթ.): Խորհրդային Միության ստեղծումը: Քեմալական շարժումը: Թուրքիայի Հանրապետության առաջացումը (1923 թ.): 1921 թ. ռազմական հեղաշրջումը Իրանում: Ղաջարների հարստության տապալումը և Փեիլի հարստության հաստատումը: Ֆաշիստական վարչակարգը Իտալիայում 1922-1939 թթ.: Բենիտո Մուսոլինի: Նացիստական վարչակարգի հաստատումը Գերմանիայում (1933 թ.): Ադոլֆ Հիտլեր: ԱՄՆ-ը XX դ. 30-

ական թթ.: Նախագահ Ֆ. Ռուզվելտի «Նոր կուրսը»: Երկրորդ համաշխարհային պատերազմի պատճառները և սկիզբը: Խորհրդային Միության Հայրենական մեծ պատերազմը: Հնդկաստանի անկախացումը 1947 թ.: Մահաթմա Գանդի և Զավահարլալ Ներու: Չինաստանի Ժողովրդական Հանրապետության ստեղծումը (1949 թ.): Մաո Ցզեդուն: 1952 թ. հեղափոխությունը Եգիպտոսում: Գամալ Աբդել Նասեր: Արաբա-իսրայելական 1948 և 1967 թթ. պատերազմները: Պաղեստինյան հիմնախնդիրը: Ազգային-ազատագրական շարժումներն Արաբական Արևելքում 1940-60-ական թթ.: Ռազմական հեղաշրջումները Թուրքիայի Հանրապետությունում: 1978-1979 թթ. հեղափոխությունը Իրանում և Իրանի Իսլամական Հանրապետության առաջացումը: Այաթոլլահ Խոմեյնի:

Միջազգային հարաբերություններ

Վեստֆալյան համակարգի առաջացումը: Վիեննայի վեհաժողովը (1814 - 1815 թթ.) և Սրբազան դաշինքի ստեղծումը: Հայկական հարցը որպես Արևելյան հարցի բաղկացուցիչ մաս: Անտանտի ռազմաքաղաքական դաշինքի կազմավորումը: Փարիզի խաղաղության վեհաժողովը (1919-1920 թթ.): Վերսալ-Վաշինգտոնյան համակարգը: Ազգերի լիգայի ստեղծումը և գործունեությունը: Սերի և Լոզանի պայմանագրերը: Նոր աշխարհամակարգի ձևավորումը Մերձավոր Արևելքում Առաջին աշխարհամարտից հետո: Մանդատային համակարգը: Հակահիտլերյան դաշինքի կազմավորումը: Երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտը: Պոտսդամի խորհրդաժողովը: Միավորված ազգերի կազմակերպությունը, նպատակները, կառուցվածքը և խնդիրները: Սառը պատերազմը: ՆԱՏՕ-ի ռազմա-քաղաքական դաշինքի և Վարշավայի պայմանագրի կազմակերպության ստեղծումը: Ինտեգրացիոն գործընթացները Արևմտյան Եվրոպայում: Եվրամիության ստեղծումը: Գաղութային համակարգի փլուզումը XX դ. 40-70-ական թթ.: Խորհրդային Միության փլուզումը և սոցիալիզմի համաշխարհային համակարգի վերացումը: Միա-

բևեռ աշխարհակարգի ձևավորումը 1990-ական թթ.: ԱՄՆ-ի միջազգային դիրքերի ամրապնդումը: Էթնոքաղաքական կոնֆլիկտները Հարավային Կովկասում XX դ. վերջում - XXI դ. Սկզբին: Հարավային Կովկասը հարևան պետությունների քաղաքականության մեջ (1991-2016 թթ.):

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ասիայի և Աֆրիկայի երկրների միջին դարերի պատմություն, Երևան, 1973:
2. ԲայբուրդյանՎ., Իրանիպատմություն (հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը), Երևան, 2005:
3. ԲայբուրդյանՎ., Օսմանյանկայսրությանպատմություն, Երևան, 2011:
4. Բայբուրդյան Վ., Իսլամ, Երևան, 2016:
5. Թուրքիայի Հանրապետության պատմություն (պատ. խմբ. Ռ. Սաֆրաստյան), Երևան, 2014:
6. Ինճիկյան Հ., Օսմանյան կայսրության անկումը, Երևան, 1984:
7. Հայաստանի հարակից երկրների պատմություն: Հատոր I: Հին շրջան: Երևան, 2013:
8. Հայաստանի հարակից երկրների պատմություն: Հատոր II: Միջին դարեր: Երևան, 2016:
9. Հովհաննիսյան Ն., Դիվանագիտություն. ֆունկցիաները. Մարմինները. ծառայողները, Երևան, 1997:
10. ՀովհաննիսյանՆ., Արաբականերկրներիպատմություն, I-IV հատորներ, Երևան, 2003-2007:
11. ՍաֆրաստյանՌ., Օսմանյանկայսրություն. Յեղասպանության ծրագրի ծագումնաբանությունը, Երևան, 2009:
12. Беляев А.Е., Арабы, ислам и Арабский халифат в раннее средневековье, Москва, 1966.
13. Богатуров А., Аверков В., История международных отношений 1945-2008, Москва, 2010.
14. Большаков О., История халифата, т. 1-2, Москва, 1989-1992.
15. Ди Нольфо Э., История международных отношений 1918-1999, Москва, 2003.
16. Еремеев Д.Е., Турция в годы второй мировой и холодной войны, Москва, 2005.

17. История Востока. В шести томах, Москва, 2000.
18. История древнего Рима (под ред. В. Кузищина), Москва, 2000.
19. История древнего Востока. Зарождение древнейших классовых обществ и первые очаги рабовладельческой цивилизации (под ред. И.М. Дьяконова, Г.М. Бонгард-Левина), ч. I - II, Москва, 1983 -1988.
20. История Китая (под ред. А.В. Меликсетова), Москва, 2002.
21. Кальвокоресси П., Мировая политика после 1945 года, Москва, 2000.
22. Мурадян П., Кавказский культурный мир и Армения, Ереван, 2012.
23. Новая история стран Европы и Америки (под ред. И. Кривогуза), Москва, 2005.
24. Новейшая история стран Европы и Америки. XX век. В 3 ч. (под ред. Родригеса А., Пономарева М.), Москва, 2001-2005.
25. Орлов А., Георгиев В., Георгиева Н., Сивохина Т., История России, Москва, 2006.
26. Саркисян Е., Экспансионистская политика Османской империи в Закавказье накануне и в годы первой мировой войны, Ереван, 1962.
27. Фильштинский И., История арабов и халифата (750-1517), Москва, 2006.
28. Хитти Ф., Краткая история Ближнего Востока, Москва, 2012.
29. A Dictionary of World History, Oxford, 2015.
30. Foltz R., Iran in World History, Oxford, 2015.
31. Hovhannisyan N., The Armenian Genocide. Armenocide - the most genocidal genocide. In ten languages of the World, Yerevan, 2009.
32. Jilbert M.J., South Asia in World History, Oxford, 2017.
33. Pekkanen S., The Oxford Handbook of the International Relations of Asia, Oxford, 2014.
34. Ropp P., China in World History, Oxford, 2010.
35. Scott H., The Oxford Handbook of Early Modern European History, 1350-1750, 2 vol., Oxford, 2015.
36. The Cambridge Ancient History (I-XIV volumes), Cambridge, 1970-2005.
37. The New Cambridge Medieval History (1-7 volumes), Cambridge, 1995-2005.
38. Zürcher E., Turkey. A Modern History, New York, 2004.

Է.00.03 – ՀՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Հնագիտության առարկան, նպատակը խնդիրները: Հնագիտություն գիտակարգի ձևավորման պատմությունը: Հնագիտության տեսական հայեցակարգային հիմնական ուղղությունները՝ դարոցները (Էվոլյուցիոնիզմ, պատմամշակութային հայեցակարգ, դիֆուզիոնիզմ, Նոր հնագիտություն, պրոցեսուալ և հետպրոցեսուալ հնագիտություն, ստրուկտուրալիզմ և այլն): Հնագիտական հուշարձանների հիմնական տեսակները: Հնագիտության հիմնակազմ հասկացությունները (Հնագիտական սկզբնաղբյուր, հնագիտական համալիր, հնագիտական մշակույթ, հնագիտական շերտ, տիպ, հատկանիշ և այլն): Հնագիտական ուսումնասիրությունների մեթոդներն ու մեթոդաբանությունը: Հնագիտական շերտագրություն:

Բնական և ճշգրիտ գիտությունների մեթոդների կիրառությունը հնագիտության մեջ: Հայկական հնագիտության զարգացման պատմությունը: Հնագիտական ժառանգության պահպանության և օգտագործման օրենսդրական նորմերը (միջազգային կոնվենցիաներ, ՀՀ օրենսդրություն):

Հին քարի դար. Մարդու ծագման մասին ժամանակակից պատկերացումները, հնագույն միգրացիաների հիմնախնդիրը, մարդագոյացման առաջնային և երկրորդական արեալները: Հնաաշխարհագրական և հնակլիմայական պայմանները Պլեյստոցենում: Եվրասիայի և Աֆրիկայի խաչմերուկում, Հայկական լեռնաշխարհը որպես մարդագոյացման ինքնուրույն օջախ: Հայկական լեռնաշխարհի ստորին, միջին և վերին հին քարի դարի (պալեոլիթի) հուշարձանները: Անատոմիապես ժամանակակից մարդկանց կողմից Հայկական լեռնաշխարհի բնակեցումը: Վաղ դրսորդական և հավաքչական մոբիլ համայնքները: Վերացական մտածելակերպի և խորհրդապաշտական պատկերացումների ու արվեստի առաջացումը:

Միջին քարի դար- Նոր քարի դար. Հայկական լեռնաշխարհի հնաաշխարհագրական և հնակլիմայական պայմանները՝ ուշ պլեյստոցեն-վաղ

հոլոցեն: Պրոտոնեոլիթ և նախակերամիկական նեոլիթ: Առաջավոր Ասիայի և Հայկական լեռնաշխարհի մեզոլիթ/պրոտոնեոլիթյան հուշարձանները՝ որսորդ-հավաքչարարներ: Կուտակողից դեպի արտադրող հասարակություն: Ագրարային (նեոլիթյան) հեղափոխության հիմնական փուլերը՝ նախակերամիկական նեոլիթ, զարգացած նեոլիթ: Արտադրող տնտեսության ծագման խնդիրը, վաղագույն երկրագործ-անասնապահները (հացազգիների և կենդանիների ընտելացման ելակետային տարածքները, բազմակենտրոն և միակենտրոն մոդելները, առաջնային և երկրորդական կենտրոնները): “Ագրարային հեղափոխության” դեմոգրաֆիկական, սոցիալական, մշակութային, տնտեսական հետևանքները: Մինչքաղաքային ուրբանիզացիան, մ.թ.ա. VII-VI հազարամյակների վաղ երկրագործական մշակույթները:

Առատաշեն-Շուլավերի-Շոմութեփե մշակույթը՝ առանձնացման պատմությունն ու մեկնաբանությունը, հիմնական հուշարձանները, ընդհանուր բնութագիրը, տեղական տարբերակները. Բնակավայրերի տիպերը, բնակելի շինությունները, թաղման պրակտիկան: Նյութական մշակույթ. քարի ինդուստրիայի հիմնական գծերը, ոսկրից պատրաստված գործիքների տեսականին: Խեցեգործություն և մետաղագործության սաղմնավորումը: Հումքի տեղական աղբյուրների շահագործումը, մշակութային և տնտեսական կապերը Առաջավոր Ասիայի համաժամանակյա մշակույթների հետ, առևտրի տարանցիկ ուղիների ձևավորումը:

Պղնձի-քարի դար. Առաջավոր Ասիայի պղնձի-քարի դարի փուլաբաժանման համակարգը և ժամանակագրական շրջանակները: Հայկական լեռնաշխարհի էնեոլիթյան բնակավայրերը և մշակույթի առանձնահատկությունները: Վաղ/միջին և ուշ պղնձի-քարի դարի մշակութային խմբերը Հայկական լեռնաշխարհում՝ Հալաֆ-ուբեյդյան մշակույթների տարածման արեալի բնակատեղիներ, հուշարձանների Ադաբլուր-Սիոնիի խումբ, Արենի-Գոդեծոյան հուշարձանների խումբ, Ուրմիայի և Եփրատ-տի-

գրիսյան ավագանի ուշ էնեոլիթյան հուշարձաններ: Բնակավայրերի տիպերը: Երկրագործություն: Անասնապահություն: Արհեստներ: Մշակութային կապերը Առաջավոր Ասիայի հետ: Հասարակական հարաբերությունները և տնտեսության մեջ գրանցված առաջընթացը: Սիրիամիջագետքյան աշխարհի (Հալաֆ և Ուբեյդ) հետ առնչվող վաղ երկրագործները, հեռագնա առևտրի սկիզբը (Հայաստանը որպես վանակատի մատակարար): Նեոլիթի և էնեոլիթի արվեստն ու պաշտամունքը: Հնագույն ժայռապատկերները:

Վաղ բրոնզի դար. Վաղբրոնզիդարի պարբերացումը և ժամանակագրությունը: Կուր-արաքսյան մշակութային ընդհանրության ուսումնասիրության պատմությունը (մշակույթի և մշակութային խմբերի առանձնացման չափանիշները, տերմինաբանությունը՝ Շենգավիթյան մշակույթ, Կուր-արաքսյան մշակույթ, Վաղանդրկովկասյան մշակույթ, Սև-կարմիր խեցեղենի մշակույթ, Կիրբեթ-կերակյան մշակույթ, Վելիքենդյան մշակույթ և այլն): Կուր-արաքսյան մշակույթի աշխարհագրությունը, նրա տարածման հիմնական ուղղությունները:

Հայկական լեռնաշխարհի և հարևան շրջանների բնակլիմայակն պայմանները մ.թ.ա. IV-III հազարամյակներում: Հայկական լեռնաշխարհի վաղբրոնզեդարյանբնակատեղիները (տեղագրությունը, բնակավայրերի հիմնական տիպերը, ճարտարապետությունը, (շինությունների հատակագծային լուծումները և շինարարական տեխնիկան), դամբարանների տիպերը և թաղման ծեսը: Հիմնական հուշարձանները. Շենգավիթ, Նախիջևանի Քյուլ-Թափա, Էլառ, Մոխրաբլուր, Ջրահովիտ, Հառիճ, Նորշուն Թեփե, Արսլան թեփե, Սոս Հույուկ, Յանիկ թեփե, Գեղարոտ և այլն): Նյութական և հոգորո մշակույթը (խեցեղենը՝ ձևաբանություն և զարդարվեստ, պատրաստման տեխնիկա, ժամանակագրական և աշխարհագրական խմբերը, մետաղյա գույքի հիմնական տեսակները, տիպաբանությունը, համաձուլվածքների բաղադրությունը), քարե իրերի հումքի տեսակները:

րը, ձևաբանական-տեխնոլոգիական բնութագրերը, ոսկրե իրերը, օջախի հենակները, արվեստի և պաշտամունքի նմուշները: Պաշտամունքային կառույցները, օջախները, մարդակերպ և կենդանակերպ պաշտամունքային արձաններն ու արձանիկները:

Կուր-արաքսյան մշակույթի սոցիալ-տնտեսական բնութագիրը՝ երկրագործությունը և անասնապահությունը, արհեստները, առևտուրն ու փոխանակումը: Վաղ կոմպլեքսային հասարակությունների առաջացումը Հայկական լեռնաշխարհում՝ հասարակական հարաբերությունները և սոցիալական կազմը: Էգալիտարը և էլիտարը կուր-արաքսյան մշակույթում:

Միջին բրոնզի դար. Հայկականլեռնաշխարհի պատմամշակութային նոր միջավայրի ձևավորման և զարգացման առանձնահատկությունները. մշակութային բազմազանություն, սև (վաղ շրջան) և գունազարդ (զարգացած և ուշ շրջաններ) խեցեղեն ավանդույթներ, քոչվոր-անասնապահական ապրելակերպի գերակայություն, հարաբերություններ Փոքր Ասիայի և Էգեյան մշակույթների հետ, անագաբրոնզի օգտագործում: Կուր-գանային, թռեղքյան, սևան-արցախյան, կարմիր-բերդյան, կարմիր-վանքյան հնագիտական մշակույթները (մշակութային խմբերը) և դրանց ժամանակագրական հարաբերակցության խնդիրը: Հիմնական հուշարձանները. դամբարանադաշտերի գերակայությունը բնակավայրերի նկատմամբ: Արարատյան դաշտի հուշարձանները: Հառիճի բնակատեղին և դամբարանադաշտը: Էլառ-Դարանիիհուշարձանները: Գուգարք-Թռեղքի հուշարձանները: Քարաշամբի դամբարանադաշտը: Սևանի ավազանի հուշարձանները: Կարմիրբերդյան (Թազաքենդ) հուշարձանները: Հուշարձանների Մուղան-Ղարաբաղյան խումբը (Ուզերլիկ-Թեփե): Պարսկահայքի հուշարձանները (Հաֆթավան-Թեփե, Դինկա-Թեփե): Արհեստներ: Մետաղագործություն: Ոսկերչություն: Խեցեգործություն: Գունազարդ խեցեղենի բնորոշ գծերը: Սոցիալական շերտավորման խորացումը:

Ուշ բրոնզի դար. Ուշ բրոնզը և նրա ժամանակագրական շրջանակները: «Ինտերնացիոնալիզմի» դարաշրջանը: Հայկական լեռնաշխարհը ուշ բրոնզի դարաշրջանում. լճաշեն-մեծամորյան մշակույթի ձևավորման և վերելքի առանձնահատկությունները: Արտադրողական ուժերի զարգացումը: Տնտեսության նոր ձևեր (պալատական և տաճարային): Բնակատեղիներ և դամբարանադաշտեր: Արարատյանդաշտը: Սևանա լճի ավազանը: Լճաշեն: Արցախ: Շիրակ: Արթիկ: Կիրովական-Լոռի-բերդ: Թռեղք: Տնտեսություն: Մետաղի արդյունահանումը և մշակումը. մաքուր անագի, կապարի և ծարիրի օգտագործումը: Զինագործություն և աշխատանքի գործիքների արտադրություն: Գեղարվեստական մետաղը: Ոսկերչություն: Փոխադրամիջոցներ: Առևտուր: Սոցիալական միջավայրի և հասարակական կյանքի փոփոխությունների մասին վկայող հնագիտական սկզբնաղբյուրները: “Զինվորի դամբարանների” ֆենոմենը: Տեղական թագավորությունների առաջացումը (Հայասա),ակտիվ մշակութային, առևտրական և քաղաքական հարաբերությունները խեթական և միջագետքյան կենտրոնների հետ:

Վաղ երկաթի դար. Երկաթի հայտնագործման նշանակությունը. Երկաթի արդյունահանման սկիզբը: Հայկական լեռնաշխարհի և Փոքր Ասիայի պետությունները և ցեղերը Վանի թագավորության կազմավորման նախօրեին: Լճաշեն-մեծամորյան մշակույթի բնորոշ գծերը: Հասարակության ռազմականացումը: «Կիկլոպյան ամրոցներ»-ի ծաղկման շրջանը: Հայկական լեռնաշխարհի ցեղերի մշակութային և թերևս քաղաքական համախմբումը (Նաիրի, Էթիունի): Էթիունի երկրի զբաղեցրած տարածքն ըստ ուրարտական աղբյուրների: Արքայապատկան քաղաքներ և դամբարանադաշտեր: Շիրակի դաշտի նախաուրարտական մշակույթը: Արարատյան դաշտի հուշարձանները: Նախաուրարտական Կարմիր-բլուրը: Մեծամորի նախաուրարտական մշակույթը: Սևանի ավազանի հուշարձանները: Պատմական Գուգարքը, Արցախը, Ուտիքը: Վաղ երկաթի դարի

երկրագործությունն ըստ մշակույթի նյութական մնացորդների և ուրարտական գրավոր աղբյուրների: Անասնապահության վերելքը: Արհեստագործություն: Թաղման ծես: Ուշ բրոնզի և վաղ երկաթի արվեստն ու հավատալիքը: Դվինի պաշտամունքային կոթողները: Գեղարտի, Մեծամորի տաճարական համալիրները:

Հայաստանը մ.թ.ա. IX-VI դդ. Վանի թագավորության շրջանի հուշարձանների հնագիտական ուսումնասիրության պատմությունը: Ուրարտական պետության հիմնադրման նյութական և սոցիալ-տնտեսական նախադրյալները: Քաղաքաշինություն: Վանի, Թոփրակ-Կալեյի, Էրեբունիի պեղումները: Արգիշտիխինիլի պեղումները: Թեյշեբանիի պեղումները: Նոր հնագիտական պեղումները ներկայիս Թուրքիայի և Իրանի տարածքի հուշարձաններում, դրանց նշանակությունը Վանի թագավորության մշակույթի ուսումնասիրության համար: Ճարտարապետություն, շինարարական արվեստ: Թաղման ձևեր և ծեսեր: Տնտեսության հիմնական ճյուղերը. Երկրագործություն և անասնապահություն: Զրամբարների և ջրանցքների շինարարություն, ոռոգելի երկրագործության զարգացումը Ուրարտուում: Արհեստներ. Մետաղագործություն: Երկաթի լայն յուրացումը և դրա նշանակությունը: Խեցեգործություն, քարակոփություն, փայտի մշակում, ոսկրագործություն: Ուրարտուի արվեստը: Պանթեոնը: Ուրարտուի սեպագիր արձանագրությունները, նրանց լեզուն և բովանդակությունը: Ուրարտական մշակույթի աղբյուրները Առաջավոր Ասիայի (Իրան, Միջագետք, Փ.Ասիա, Կովկաս, Սիրիա, Պաղեստին) մշակույթների հետ: Լճաշեն-մեծամորյան /էթիունյան և Վանի բիայնական մշակույթների հարաբերակցության խնդիրը: Ուրարտու-Հայաստան խնդիրը:

Հայաստանը մ.թ.ա. VI-IV դդ. Դարաշրջանի պատմամշակութային բնութագիրը և առանձնահատկությունները: Հայաստանը Աքեմենյան Իրանի կազմում: Բեհիսթունյան արձանագրությունը և Հայաստանի հիշատակումները: Աքեմենյան մշակույթի առանձնահատկությունները և հայ-

իրանական մշակութային կապերի բնույթը: Հայաստանի VI-IV դդ. Մշակույթի հնագիտական ուսումնասիրման պատմությունը: Քաղաքները, ամրոցները, ավանները, գյուղերը, տաճարային կենտրոնները: Ճարտարապետությունն ու շինարարական արվեստը: Թաղման ձևերն ու ծեսը: Խեցեգործություն: Մետաղագործություն: Կնքագործություն (գլխատիկա): Առևտրական կապեր: Դրամական շրջանառություն: Ուրարտական շրջանի և VI-IV դդ. Հայաստանի մշակութային ժառանգականության խնդիրը:

Հայաստանը մ.թ.ա. III-I դդ. Հելլենիստական դարաշրջանի բնորոշ գծերը: Հայաստանի սոցիալ-տնտեսական կառուցվածքը: Հայաստանի հելլենիստական դարաշրջանի հոգևոր մշակույթը. գիր, գրականություն, թատրոն: Հուշարձանները և նրանց ուսումնասիրման պատմությունը: Քաղաքները: Տեղադրություն, քաղաքաշինություն: Հայաստանի քաղաքները որպես երկրագործության, արհեստների և առևտրի կենտրոններ: Քաղաքների հասարակական և տնտեսական դերը: Արմավիրի, Արտաշատի պեղումները, նրանց նշանակությունը: Հայաստանի ամրոցները, ավանները, տաճարական կենտրոնները: Հայաստանի հելլենիստական դարաշրջանի ճարտարապետությունը: Դամբարանների տիպերը և թաղման ծեսը: Հին հայկական քանդակագործությունը: Մշակույթի զարգացման առանձնահատկությունները հելլենիստական Հայաստանում: Խեցեգործություն (հասարակ, գունազարդ, ջնարակած խեցեղեն): Մետաղագործություն, ոսկերչություն, ապակեգործություն, կնքագործություն: Հայաստանի առևտրական կապերը մ.թ.ա. III-I-ին դարերում:

Հայաստանը I-III դդ. - Հայաստանի մ.թ. առաջին դարերի հուշարձանները և նրանց հնագիտական ուսումնասիրության պատմությունը: Հայաստանի հասարակական կառուցվածքի հետագա զարգացումը: Քաղաքներն ու ամրոցները: Արտաշատի և Վաղարշապատի պեղումները: Գառնի ամրոցի ճարտարապետական համալիրը (պարիսպը, հեթանոսական տաճարը, պալատական կառույցները, բաղնիքը): Հայաստանի I-

III-րդ դդ. Քանդակագործությունը: Մոնումենտալ գեղանկարչություն (Արտաշատի, Գառնիի խճանկարները): Խեցեգործություն, մետաղագործություն: Հին հայկական դրամներ: Հայաստանում գտնված օտար երկրների անտիկ դրամները: Հայաստանի դերը միջազգային առևտրում: Արամեերեն, հունարեն, լատիներեն արձանագրությունները, դրանց բովանդակությունը և առանձնահատկությունները:

Հայաստանը IV-VIII դդ. - Քրիստոնեության մուտքը Հայաստան և նոր մշակութային լանդշատի ձևավորումը: Վաղ միջնադարյան Հայաստանի ճարտարապետությունը. միանավ (Գառնի, Դվին, Եղվարդ, Անի) և եռանավ (Երեբրույք, Տեկոր, Աշտարակ, Քասաղ, Ծիծեռնավանք) կառույցները: Կենտրոնագմբեթ բազիլիկայի զարգացումը (Տեկոր, Օձուն, Մրեն, Գայանե, Էջմիածնի Մայր տաճար, Սիսիան, Ավան, Հռիփսիմե): Դվինի, Բագավանի և Թալինի տաճարները: Զվարթնոց: Վաղ միջնադարյան Հայաստանի պալատական շենքերը (Դվին, Զվարթնոց, Ավան, Արուճ) և դեկորատիվ հարդարանքը: Դեկորատիվ քանդակագործության զարգացումը: Սյուժետային քանդակագործություն: IV-VII դարերի կոթողների արվեստը: Հելլենիստական տրադիցիաները IV-VII դդ. Հայկական կերպարվեստում: Որմնանկարչություն(Տեկոր, Արուճ, Թալին): Դվինի հնագիտական ուսումնասիրությունը:

Հայաստանը IX-XIII դդ. Դարաշրջանի ճարտարապետության հիմնական հատկանիշները: Քաղաքացիական ճարտարապետություն. Անին X-XI դդ. (Ն.Յա. Մառը և Անիի հնագիտական ուսումնասիրությունը): Ամրոցները՝ Ամբերդը, Մաղասաբերդը և Տիգնիսը: Սյունիքի ճարտարապետական դպրոցը (Տաթևի վանքը, Սևանավանքը, Գոդևանքը): Վասպուրականի ճարտարապետական դպրոցը (Ախթամարի Սբ. Խաչտաճարը): Հյուսիսային Հայաստանի ճարտարապետությունը: Անի-Շիրակի դպրոցը: Գուգարքի ճարտարապետությունը (Սանահին, Հաղպատ): Անիի մայր տաճարը: Խճկոնքի հուշարձանախումբը: Մարմաշենի, Բջնիի, Կեչառիսի եկեղեցի-

ները: Քանդակագործություն: Խաչքարերի արվեստը: Որմնանկարչություն: Կիրառական արվեստ: Միջնադարյան քաղաքի ձևավորումը: Ներքին առևտուրը: Արտաքին առևտուրը: Դրամական շրջանառությունը: Հայաստանի խոշոր քաղաքները: Հյուսիսային մայրուղու վրա գտնվող քաղաքները (Դվին, Անի, Կարս, Կարին, Արեն, Երզնկա): Հարավային մայրուղու վրա գտնվող քաղաքները (Բերկրի, Արճեշ, Մանազկերտ, Խլաթ, Բաղեշ, Արզն, Նփրկերտ): Քաղաքների դերն ու նշանակությունը երկրի հասարակական-տնտեսական կյանքում: Երկրագործությունը, անասնապահությունը, արհեստները միջնադարյան Հայաստանում: Արհեստների հետագա զարգացումն ու ճյուղավորումը (մետաղագործություն, զինագործություն, պղնձագործություն, ոսկերչություն, շինարարական արհեստներ, փայտամշակություն, կավագործություն, անվագործություն, գորգագործություն, մորթեգործություն, գրքի և գրչության հետ կապված արհեստներ, այլ արհեստներ): Հայաստանը XII-XIII-րդ դարերում. Քաղաքների, արհեստների և առևտրի նորվերելքը (Անի, Դվին, Երևան, Կարս, Կարին, Երզնկա, Խլաթ, Մանազկերտ, Արճեշ, Նփրկերտ): **Հայաստանը XIV-XVIII դդ.** Հայաստանի XIV-XVII դդ. նշանավոր բնակավայրերը, պատմաճարտարապետական ու հնագիտական հուշարձանները: XIV-XVIII դդ. վանական համակառույցները. Մուղնիի Ս. Գևորգ, Շողակաթ, Երևանի եկեղեցիները, Խոր Վիրապ, Մեղրիի եկեղեցիները, Շատինի վանք: XVII-XVIII դդ. Ճարտարապետական հուշարձանների ոճական և հորինվածքային առանձնահատկությունները: Ուշ միջնադարյան նշանավոր ճարտարապետներն ու քարգործ վարպետները: Ուշ միջնադարի խաչքարային և տապանաքարային արվեստը: Ջուղայի խաչքարերը: Հայկական գաղթօջախների պատմաճարտարապետական հուշարձանները:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Խնկիկյան Օ.Ա. Հայաստանի հնագիտություն, Ե., 2009:
2. Սարգսյան Գ., Պատմամշակութային հուշարձանների պահպանության հիմունքներ, Ե., 2005:
3. Քալանթարյան Ա., Մելքոնյան Հ. Հնագիտական աշխատանքները Հայաստանում 1990-2003 թթ., Ե. 2005:
4. Avetisyan P., Bobokhyan A. (ed.). Archaeology of Armenia in Regional Context, Proceedings of the International Conference dedicated to the 50th Anniversary of the Institute of Archaeology and Ethnography Held on September 15-17, 2009 in Yerevan, Yerevan, 2012.
5. Lindsay I., Smith A.T. A History of Archaeology in the Republic of Armenia, Journal of Field Archaeology 31/2, 2006.
6. Renfrew C., Bahn P. G. Archaeology: Theories, Methods, and Practice, London, 1991.

Քարի դար-պղնձի-քարի դար

7. Թորոսյան Ռ.Մ., Թեղուտի վաղ երկրագործական բնակավայրը (մ.թ.ա. 4-րդ հազարամյակ), Ե., 1976:
8. Кушнарева К.Х. Южный Кавказ IX-IIтыс. до.н.э. Санкт Петербург, 1993.
9. Мезолит СССР.- Археология СССР. Т. II, М., 1989.
10. Палеолит СССР.- Археология СССР. Т. 5, М., 1984.
11. Энеолит СССР.- Археология СССР, т. 3, М., 1983.
12. Badalyan, R., Lombard, P., Avetisyan, P. and Chataigner, C. The Neolithic and Chalcolithic phases in the Ararat Plain (Armenia): The view from Aratashen. In: Sagona, A. (ed.), A view from the Highlands. Archaeological studies in honor of Charles Burney. Ancient Near Eastern Studies, Supplement 12, 2004.
13. Chataigner C., 1995, La Transcaucasie au Néolithique et au Chalcolithique, Lyon, Maison de l'Orient Méditerranéen, Oxford, B.A.R Inter. Ser. 624.
14. Chataigner C., Badalyan R., Arimura M. 2014. The Neolithic of the Caucasus. Oxford Handbooks Online, Oxford University Press, <http://www.oxfordhandbooks.com/view/10.1093/oxfordhb/9780199935413.001.0001/oxfordhb-9780199935413-e-13>.
15. Lyonnet B. (ed.). Les cultures du Caucase (VI^e -III^e millénaires avant notre ère): Leurs relations avec le Proche-Orient, Paris, 2007.

16. Gasparyan B., Arimura M. (ed.). Stone Age of Armenia: A Guide-Book to the Stone Age Archaeology in the Republic of Armenia, Kanazawa, 2014.
17. Kushnareva, K.Kh. The Southern Caucasus in Prehistory, Stages of Cultural and Socioeconomic Development From the Eight to the Second Millennium B.C., University Museum Monograph 99, Philadelphia, 1997.

Բրոնզի դար-վաղ երկաթի դար

